

ՍԱՂՄՈՍ 77

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Աստծո հզոր գործերը հիշելիս նեղության մեջ մխիթարություն	Աստծո փրկագոր- ծությունների մխիթարող հիշատակը	Անձնական նեղությունից ազատագրվելու համար աղոթք	Մխիթարություն նեղության ժամանակ	Խորհրդածություն Իսրայելի անցյալի շուրջ
<u>MT ներածություն</u>				
Գլխավոր երաժշտին, Իդիթոմին, Ասափի սաղմոսը				
77:1-6	77:1-3	77:1-3	77:1-3	77:1 77:2-3
	77:4-6	77:4-10	77:4-10	77:4-6
77:7-10	77:7-9 77:10-15			77:7-9 77:10-12
77:11-15		77:11-15	77:11-15	77:13-15
77:16-20	77:16-20	77:16-20	77:16-20	77:16-17 77:18-19 77:20

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Մուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Մուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս Սաղմոսը առանձնանում է իր ԸՂԶԱԿԱՆՆԵՐՈՎ (8): Սաղմոսերգուն հիշում է, թե ինչեր է ինքն արել և թե ինչեր է ՅԱՀՎԵՆ արել անցյալում:

Բ. Սաղմոս 77:11-15, 16-20 կենտրոնանում է ՅԱՎԵԻ գործերի վրա՝

1. փրկագործության
2. ստեղծագործության

Գ. ՅԱՀՎԵՆ՝

1. արարիչ է
2. պատերազմող
3. պահապան
4. հովիվ

Դ. Այս Սաղմոսը հատուկ կերպով նշում է՝

1. Հակոբին, Սաղմ. 77:15
2. Հովսեփին, Սաղմ. 77:15
3. Մովսեսին, Սաղմ. 77:20
4. Ահարոնին, Սաղմ. 77:20

ՅԱՀՎԵԻ անցյալում կատարած փրկագործությունները և մատակարարումը թվում է, թե շատ վաղուց են եղել և հեռու էին: Ուշադրություն դարձրե՛ք Սաղմ. 77:7-9-ում առկա հարցաշարին:

Դ. Սաղմ. 77:16-20 նման է իր աստվածաբանությամբ և Սաղմ. 74:13-17-ում ՅԱՀՎԵՆ որպես Արարիչ իր նկարագրությամբ: Չրի նկարագրությունը հնարավոր է նկատի ունի Ծննդոց 1 (այսինքն՝ ստեղծագործությունը) կամ Ելից 14-15 (այսինքն՝ ելքը):

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 77:1-6

¹Իմ ձայնով Աստծուն *կանչեցի*,

Իմ ձայնով Աստծուն կանչեցի, ու Նա ինձ լսեց:

²Իմ նեղության օրը ես ՏԻՐՈՋԸ փնտրեցի:

Գիշերը իմ ձեռքը մեկնված էր ու չէր թուլանում:

Իմ անձը չէր ուզում մխիթարվել:

³Աստծուն հիշեցի ու տագնապեցի:

Գանգատվեցի, ու հոգիս նվաղեց: Սելա:

⁴Իմ աչքերը արթուն ես պահում,

Այնքան խռովվեցի, որ չկարողացա խոսել:

⁵Մտաբերեցի նախկին օրերը,

Հին ժամանակների տարիները:

⁶Գիշերվա մեջ հիշում եմ իմ երգը,

Հաղորդակցվում եմ սրտիս հետ

Ու իմ հոգին մանրակրկիտ քննում է:

77:1 «Իմ ձայնով Աստծուն կանչեցի» Այս արտահայտությունն առանց ԲԱՅԻ կրկնվում է երկու անգամ շեշտադրության համար: Սաղմոսերգուն աղոթել է հաճախ և ջերմեռանդորեն, սակայն առանց խաղաղության՝ արդյունքի: Նա վստահում է ՅԱՀՎԵԻՆ, սակայն փափագում է, որ Նա գործի այնպես, ինչպես գործել է անցյալում Իր հետ ուխտի մեջ մտած ժողովրդի համար:

❖ **«Ես բարձրաձայն եմ կանչելու /անզերենում/»** Այս ԲԱՅԸ (BDB 858, KB 1042, *Qal* ԸՂԶԱ-ԿԱՆ) հաճախ կիրառվում է ելիցում և անապատում դեգերելու շրջանում (տես՝ Ելից 14:10, 15, 17:4, Թվոց 12:13, 20:16, 2 Օր. 26:7): Հնարավոր է, որ Սաղմ. 77:16-19-ի նկարագրությունը վերաբերում է այս նույն շրջանին: Հին աշխարհում չկար լուռ աղոթք: Ընթերցանությունը և աղոթքը կատարվում էր բարձրաձայն:

❖ **«Նա ինձ լսեց»** Սա թե՛ հաստատում և թե՛ խնդրանք է: Այս պարբերության մնացած մասը (Սաղմ. 77:1-6) արտահայտում է սաղմոսերգուի նեղությունը ՅԱՀՎԵԻ ակնհայտ լռության ժամանակ:

77:2 «Իմ նեղության օրը» Սա Սաղմոսներում պարբերաբար կրկնվող արտահայտություն է (տես՝ Սաղմ. 50:15, 86:7, մի փոքր տարբերվող արտահայտություն, սակայն միևնույն հասկացությամբ՝ Սաղմ. 91:15, 107:6, 15):

«Օր» բառի կիրառությունը ցույց է տալիս ինչ-որ մի շրջան և ոչ թե ստույգ 24 ժամ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՕՐ (*yom*)

❖ **«Գիշերը իմ ձեռքը մեկնված էր»** Նկատելք, որ առաջին տողի «օրը» զուգահեռվում է երկրորդ տողի «գիշերը» խոսքի հետ: Սա հարատևություն արտահայտելու մի կերպ էր (այսինքն՝ «առանց հոգնելու»), ժամերով աղոթք (այսինքն՝ «ձեռքերը վեր բարձրացրած»):

Հրեական աղոթքի դիրքը սովորաբար՝

1. կանգնած
2. ձեռքերը վեր մեկնած
3. բաց աչքերով, դեպի երկինք հառած էր

ԲԱՅԸ (BDB 620, KB 669, *Niphal* ՎԱՂԱԿԱՏԱԲ) բառացիորեն «հեղված» է: NIDOTTE, հատոր 3, էջ՝ 27, կարծում է, որ աղոթքի երկու ասպեկտները միավորված են այս համարում (տես՝ Ողբ 2:19):

1. Աղոթքի մեջ մարդը իր սիրտը հեղում է՝ թափում է Աստծո առաջ
2. աղոթքի մեջ մարդն իր ձեռքերը բարձրացնում մեկնում է դեպի Աստծուն

❖ **«Իմ անձը չէր ուզում մխիթարվել»** ՅԱՀՎԵՆ թվում է չէր լսում և գործում, ուստի սաղմոսերգուն շարունակում էր աղոթել: Սա աստվածաբանորեն զուգահեռ էր Ամբակումին (այսինքն՝ Ամբակում 2:1):

77:3 Սա երեք *Qal* ԸՂԶԱԿԱՆՆԵՐԻ շարք է: Սաղմոսերգուն չէր կարողանում աղոթքի մեջ խաղաղություն գտնել: Թվում էր, թե անցյալում ՅԱՀՎԵԻ գործողությունները (տես՝ Սաղմ. 77:5) ուխտի ժողովրդի համար փոխվել էին (տես՝ Սաղմ. 77:10բ):

❖ **«Սեղա»** Տես Սաղմ. 3:2-ի գրառումները: Նկատելք, որ այն հայտնվում է Սաղմ. 77:3,9,15-ի վերջում: NJB և NKJV դիտարկում են այս կիրառությունը որպես առանձին պարբերությունների փակում:

77:4ա Պոեզիայի այս տողը շփոթեցնող է: Սաղմոսերգուն կամենում է դադարեցնել աղոթքը, սակայն ՅԱՀՎԵՆ ստիպում է (BDB 28, KB 31, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱԲ) նրան շարունակելու: Սա կարելի է նաև մեկնաբանել որպես թե Աստված թույլ է տալիս նրան արթուն մնալ, որպեսզի նա կարողանա շարունակել աղոթել: Թվում է, թե Սաղմ. 77:4-6 ծառայում է որպես ներածություն 77:7-9-ում առկա վեց հարցերի համար, Սաղմոս 77:10-ի հավանական ապշեցնող եզրահանգմամբ:

Այս առաջին պարբերությունը մանրամասնորեն նկարագրում է սաղմոսերգուի գործերը (ինչպես նաև Սաղմ. 77:11-12): Սա սաղմոսերգուի աստվածաբանական պայքարի արձանագրություն է ուխտի ժողովրդի համար Աստծո, Նրա կամքի և ճանապարհի մասին ավելի շատ տեղեկության համար: Սաղմոսերգուն ակնհայտ բաժանում է տեսնում անցյալի և ներկայի միջև: Նա չի կարողանում հասկանալ ինչու:

77:6 «Ես հիշում եմ... հաղորդակցվում եմ... քննում եմ» Սրանք երեք ԲԱՅԵՐ են, որոնք նկարագրում են սաղմոսերգուի մտավոր գործողությունները (տես՝ Սաղմ. 143:5) հուսահատությունից (Սաղմ. 77:1-5) և կասկածից (Սաղմ. 77:7-10): Եվ մինչև Սաղմ. 77:11-15, 16-20 նա չի վերագտնում իր վստահության զգացումը Իսրայելի համար ՅԱՀՎԵԻ բնավորության և գործողությունների հանդեպ:

Նկատելի էր երեք ԲԱՅԵՐԸ (երկուսը նույնը), որոնք կրկին հանդիպում են Սաղմ. 77:11-12-ում: Հավատքը պահանջում է ժամանակ և խորհրդածություն: Հայտնության և անձնական փորձառության վստահելիությունը միաձուլվում են դառնալով հաստատուն համոզումներ:

❖ **«գիշերվա մեջ երգը»** Սաղմ. 42:8-ի պատճառով այս արտահայտությունը կարող է լինել ակնարկ ՅԱՀՎԵԻ գթառատ գործերի, որոնք վերածվել էին գիշերային ժամերի փառաբանության (թե՛ գիտակցված և թե՛ չգիտակցված): Սաղմոսերգուն ճանաչում էր փառաբանության և խաղաղության օրերն ու գիշերները, սակայն իր տվյալ պահի փորձառությունը շատ էր տարբերվում:

UBS տեքստային նախագիծը NASB-ի «երգ» թարգմանած տերմինին տալիս է երեք հնարավորություն (BDB 618):

1. երաժշտություն - ִתְּנַנֵּן (MT, NASB)
2. շնջալ, խորհրդածել - ִתְּנַנֵּן (LXX, Peshitta, NJB)
3. վիշտ - ִתְּנַנֵּן (NEB)

❖ **«իմ հոգին քննում է»** ԲԱՅԸ բառացիորեն նշանակում է «որոնում է» (BDB 344, KB 341, *Piel* ԱՆԿԱՏԱՐ *վալ*-ի հետ): Այն ԱՐԱԿԱՆ է և «հոգի» (BDB 924) ԻԳԱԿԱՆ է: Ուստի, այն կարող է վերաբերել՝

1. հենց սաղմոսերգուին
2. Աստծուն, որ քննում է նրան (տեղ՝ Սաղմ. 139:1,23):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 77:7-10

⁷«Արդյոք **ՏԵՐԸ** հավիտյան մերժելո՞ւ է

Ու այլևս չե՞նք վայելելու Նրա բարեհաճությունը:

⁸**Մի՞թե Նրա ողորմությունը ընդմիշտ վերջացավ,**

Ու Իր խոստումը դադարեց սերնդից սերունդ:

⁹**Մի՞թե Աստված մոռացավ շնորհ ցույց տալը,**

Մի՞թե բարկությամբ արգելեց Իր քաղցր ողորմությունը»: Սեյա:

¹⁰**Եվ ես ասացի. «Մա է իմ ցավը,**

Բայց ես Բարձրայի աջ ձեռքի տարիներն եմ հիշելու»:

77:7-10 Այս պարբերությունը կապված է Սաղմ. 77:1-6-ում սաղմոսերգուի անհանգստության աղոթքի հետ: Նա չի կարողանում հասկանալ: Նա հարցնում է մի շարք խիստ, վախենալու հարցեր, որոնք կարծես թե հարցադրում են ՅԱՀՎԵԻ ուխտի խոստումները և անփոփոխ բնավորությունը: Սրանք ամենավախենալու հարցերն են ՀԿ-ում: Ըստ երևույթին նա չէր հասկանում, որ խնդիրը կարող էր լինել ուխտի ժողովրդի մեղքը, կռապաշտությունը և ուխտի անհավատարմությունը:

Այս հարցերի ամենաանհանգստացնող կողմը նրա սխալ եզրահանգումն է (այսինքն՝ Սաղմ. 77:10):

Դերեք Քիդների *Թինդելլ ՀԿ-յան մեկնաբանություններ* (էջ՝ 308-309) դիտարկում է այն տեսակետը, որ Սաղմ. 77:10 դրական շրջադարձային համար է, որը ներկայացնում է Սաղմ. 77:11-20-ին: «Սեյա» հայտնվում է Սաղմ. 77:9-ի ավարտին, որը կարող է ակնարկել, որ Սաղմ. 77:10-15 մի նոր պարբերություն է (տես՝ NKJV, JPSOA): Սաղմոսի տոնայնությունը անշուշտ փոխվում է 77:11-20-ում:

77:7-8 Սաղմոս 77:7 և 8 ունեն չորս բառեր կամ արտահայտություններ, որոնք նկարագրում են սաղմոսերգուի զգացմունքները, որ ՅԱՀՎԵՆ մշտապես թողել էր Իսրայելին:

1. հավետ, Սաղմ. 77:7 – BDB 761
2. ընդմիջտ, Սաղմ. 77:8 – BDB 664
3. դադարեց սերնդից սերունդ (բառացի՝ «ավարտին է»), Սաղմ. 77:8 – BDB 170, KB 197, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ
4. վերջացավ, Սաղմ. 77:8 – BDB 189 ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ BDB 189

Առաջին կետի համար տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ ('olam): Այս կրկնությունը ցույց է տալիս սաղմոսերգուի վախը և կասկածը:

77:8 «ողորմությունը» Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԳԹԱՍՐՏՈՒԹՅՈՒՆ (hesed):

77:10

NASB, NRSV

«սա է իմ վիշտը»

NKJV

«սա է իմ ցավը»

NJB

«Սա այն է ինչ վիրավորում է ինձ»

JPSOA

«սա իմ հանցանքն է»

Peshitta

«սա իմ մեղքն է»

Ժամանակակից գիտնականների միջև անհամաձայնություն կա երբայերեն այս արմատի հարցում՝

1. իլո, BDB 317 I – «հիվանդացնել» (NASB, NRSV, TEV, NET, REB, Peshitta)
2. իլո, BDB 318 II – «բարեհաճությունը թախանձել» (NIV)
3. Դլո, BDB 319 – «խոցել» (NJB, UBS Տեքստային Նախագծի առաջարկը՝ «իմ վիրավորված անձը», էջ՝ 333):

❖ «**Բարձրյալը**» Երբայերեն այս անունը «*Էլիոն*» (BDB 71, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ), «բարձր» կամ «վերին» բառից է: Այն կիրառվում է ոչ իսրայելացիների կողմից Ծննդ. 14:18-22, Թվոց 24:16, 2 Օր. 32:8-ում Աստծո համար:

Այս Սաղմոսը Աստծո համար մի քանի անուններ է կիրառում՝

1. *Էլոհիմ*, Սաղմ. 77:1 (երկու անգամ), 3, 13, 16
2. *Ադոնայ*, Սաղմ. 77:2, 7 (բառացի՝ «իմ Տեր»)
3. Բարձրյալ, Սաղմ. 77:10
4. *Յահ*, Սաղմ. 77:11 (ՅԱՀՎԵԻ հապավումը)
5. *Էլ*, Սաղմ. 77:9, 13, 14 (ՀՄԱ-ում Աստծո համար կիրառվող ընդհանուր անուն)

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 77:11-15

¹¹ՏԻՐՈՉ գործերն են հիշելու.

Հիրավի հիշելու են Քո հին օրերի հրաշքները:

¹²Խորհելու են Քո բոլոր գործերի մասին

Ու Քո արածների մասին են խոսելու:

¹³Ո՛վ Աստված, Քո ճամփան սրբության մեջ է.

Ո՛վ է մեր Աստծո պես մեծ Աստված:

¹⁴Հրաշքներ կատարող Աստվածը Գու ես.

Քո գործությունը ցույց տվեցիր ժողովուրդների մեջ:

¹⁵Քո բազկով փրկեցիր Քո ժողովրդին՝

Հակոբի ու Հովսեփի որդիներին: Սեյա:

77:11-15 Սաղմոսերգուն նորից փորձում է կենտրոնանալ ՅԱՀՎԵԻ անցյալի գործերի վրա (տես՝ Սաղմ. 77:11-12, 14-15): Նա նորից կենտրոնանում է Նրա անփոփոխ, յուրահատուկ բնավորության վրա (տես՝ Սաղմ. 77:13, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ):

Նկատել՝ ԲԱՅԵՐԻ դիտավորյալ զուգահեռը Սաղմ.77:11-12-ում համեմատած Սաղմ.77:6-ի հետ:

77:11 «հրաշքները» Այն մատնացույց է անում ՅԱՀՎԵԻ ստեղծագործությունը և փրկագործությունը: Այս նույն բառը (BDB 810) կիրառվում է Սաղմ.77:14 և միևնույն արմատը՝ Սաղմ.78:4,11,32, 107:8,15,21,24,31, 119:18,27-ում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱԲԱՆՉԵԼԻ ԲԱՆԵՐ

77:13 «Քո ճամփան» «Ճամփա» տերմինը (BDB 202) արտահայտում է՝

1. Նրա հայտնությունը, տես՝ Սաղմ. 119:14, Երեմ. 18:15, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԱՍՏԾՈՆ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:
2. Նրան առանձնահատուկ գործողություններ (այսինքն՝ Սաղմ. 119:3)

❖ **«սուրբ»** Սա կարող է վերաբերել՝

1. Աստծո բնավորությանը
2. Աստծո տաճարին

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՈՒՐԲ

77:14-15 Նկատել՝ Սաղմ.77:14բ-ի և 15ա-ի միջև զուգահեռականությունը: Այնուհանդերձ, տարբերություն կա՝

1. Քո գործությունը ժողովուրդների մեջ (այսինքն՝ ոչ իսրայելացիների, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ)
2. Քո բազկով փրկեցիր Քո ժողովրդին (այսինքն՝ Իսրայելացիներին) խոսքերի միջև

77:15 «փրկեցիր» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿԱԳՆԵԼ, ՓՐԿԱԳԻՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 77:16-20

¹⁶Չրերը տեսան Քեզ, ո՛վ Աստված, ջրերը տեսան Քեզ,

Նրանք վախեցել էին, անդունդներն էլ սարսափեցին:

¹⁷Ամպերը ջուր տեղացին, երկինքները ձայնեցին,

Նետերդ էլ սլացան:

¹⁸Քո որոտման ձայնը երկնքում էր:

Կայծակները աշխարհը լուսավորեցին:

Երկիրը սասանվեց ու դողաց:

¹⁹Քո ճանապարհը ծովում է, և Քո շավիղը՝ մեծ ջրերի մեջ,

Ու Քո ոտնահետքերը չեն երևում:

²⁰Հոտի պես առաջնորդեցիր Քո ժողովրդին

Մովսեսի ու Ահարոնի ձեռքով:

77:16-20 Սաղմոսերգուն հետադարձ հայացք է գցում Ծննդոց (տես՝ Սաղմ. 77:16) և Ելից (տես՝ Սաղմ .77:20): Ստեղծագործության Աստվածը Իսրայելի համար պատերազմողն էր դարձել:

Սաղմոսը չի սահմանում սաղմոսերգուի վերջնական եզրահանգումը: Հուսանք, որ ՅԱՀՎԵԻ անձի և գործերի մասին նրա հիշողությունները և խորհրդածությունը հանգեցրեց նրան, որ հերքեց Սաղմոս 77:10-ի իր եզրահանգումը՝ հարցադրումը:

77:16 «ջրերը» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՋՐԵՐ

77:20a Այս արտահայտությունը առանձնահատուկ է Ասափի սաղմոսներին (տես՝ Սաղմ. 74:1, 78:52, 70-76, 79:13, 80:2): Ինչպիսի գեղեցիկ տիտղոս է (այսինքն՝ Հովիվ) Արարիչ, Փրկիչ Աստծո համար: Նա մեզ հետ է և մեզ համար (տես՝ Սաղմոս 23):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Արդյո՞ք այս Սաղմոսը անհատական ողբ է, թե՛ ազգային:
2. Ինչո՞ւ են Սաղմ. 77:7-10 համարները աստվածաբանորեն այդքան կարևոր:
3. Արդյո՞ք Սաղմ. 77:10 դրական պատգամ է, թե՛ բացասական:
4. Ստեղծագործությունից, թե՞ ելիցից է կիրառում այս Սաղմոսն իր նկարագրությունը: